YEREVAN PRESS CLUB

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԴԱՇՏՈՒՄ

(Երեւանի մամուլի ակումբի հետազոտությունը
Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամի հետ համագործակցությամբ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրությունն ընդգրկել է 2022թ.փետրվարի 22-ից (Ռուսաստանի Դաշնության կողմից ինքնահռչակ ԴԺՀ-ի եւ ԼԺՀ-ի անկախությունը ճանաչելու օրվանից) մինչեւ 2022 թվականի մայիսի 31-ն ընկած ժամանակահատվածը եւ եղել է ընտրովի: Դինամիկան եւ միտումները բացահայտելու համար այս ժամանակահատվածը բաժանվել է երկու մասի՝ 02.22.2022 - 04.10.2022 եւ 04.11.2022 - 05.31.2022:

Մշտադիտարկման օբյեկտ են հանդիսացել 6 լրատվամիջոցների առցանց տարբերակները («Հայկական ժամանակ», «Առավոտ», «Հրապարակ» թերթերի տեքստային բոլոր նյութերը, ինչպես նաեւ Հանրային հեռուստաընկերությունը, civilnet.am-ը եւ 168.am-ը, որոնցում դիտարկվել են բովանդակային տեսանյութերը՝ լրատվական թողարկումներ, բանավիճային հաղորդումներ եւ հարցազրույցներ): Բացի այդ, Ֆեյսբուք սոցիալական ցանցում մշտադիտարկվել են հասարակական կարծիքի 9 պայմանական առաջնորդների (վերջիններիս ցուցակը գաղտնի է եւ ներկայացված է միայն այս նախագծի գործընկերոջը) հանրային օգտահաշիվները: Ընտրությունը կատարել են Երեւանի մամուլի ակումբի փորձագետները՝ առաջատար լրատվամիջոցների հրապարակումների եւ սոցիալական ցանցերի ակտիվ օգտատերերի առավել լայն շրջանակի գրառումների փորձնական ուսումնասիրության միջոցով: Մշտադիտարկման օբյեկտները որոշելիս օգտագործվել են հետեւյալ չափանիշները՝ հետաքրքրությունը համապատասխան թեմայի նկատմամբ, լսարանի ուշադրության մակարդակը (լրատվամիջոցների դեպքում՝ արխիվի դիտումների քանակը եւ հասանելիությունը, իսկ Ֆեյսբուքի դեպքում՝ այլ օգտատերերի արձագանքը): Հնարավորինս ամբողջական պատկեր ստանալու համար դիտարկման օբյեկտների վերջնական որոշման ժամանակ հաշվի են առնվել նաեւ ԶԼՄ-ների եւ հասարակական կարծիքի ընտրված առաջնորդների քաղաքական դիրքորոշումները. հավասարապես ներկայացված են, պայմանականորեն ասած, իշխանությունների հանդեպ լոյալ վերաբերմունք ունեցող, համեմատաբար չեզոք դիրք զբաղեցնող եւ ընդդիմադիր հայացքներ ունեցող (հիմնականում՝ խորհրդարանական փոքրամասնությանը հարող) ԶԼՄ-ները:

Հրապարակումները, հաղորդումները եւ ֆեյսբուքյան գրառումներն ուսումնասիրվել են ընդհանուր թեմայի հետեւյալ ասպեկտների համաձայն.

- Ուկրաինայում պատերազմի (ԿԺԴՀ-ի եւ ԼԺՀ-ի անկախության ճանաչում) կողմերից ո՞րն է լեգիտիմ նպատակներ հետապնդում:
- Ուրիշ ի՞նչ գործոններ են դեր խաղում ռուս-ուկրաինական առճակատման կողմերի նկատմամբ հայ հասարակության համակրանքը ցուցաբերելու հարցում:
- Ո՞ր կողմն է ավելի հակված դաժանության եւ ռազմական հանցագործությունների:
- Արդյո՞ք Հայաստանը՝ որպես Ռուսաստանի Դաշնության ռազմավարական դաշնակից եւ ՀԱՊԿ անդամ, պետք է մասնակցի ռազմական գործողություններին Ռուսաստանի կողմից:

- Արդյո՞ք Հայաստանը պետք է կողմերից մեկին քաղաքական եւ բարոյական աջակցություն ցուցաբերի (հայտարարություններ, քվեարկություն միջազգային կազմակերպություններում եւ այլն)։
- Որքանո՞վ են արդարացված Ռուսաստանի (Ռուսաստանի քաղաքացիների) եւ Բելառուսի դեմ արեւմտյան պատժամիջոցները։
- Պատերազմի հետեւանքները Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա ինչպիսի՞ն են լինելու։
- նչպիսի՞ն պետք է լինի Հայաստանի իշխանությունների եւ հայ հասարակության վերաբերմունքը երկիր ժամանող Ռուսաստանի եւ Ուկրաինայի քաղաքացիների նկատմամբ։
- Ինչպիսի՞ն է հայերի վիճակն Ուկրաինաում, եւ ի՞նչ դիրքորոշում ունեն նրանք հակամարտության նկատմամբ։
- Պատերազմի ո՞ր ելքն է ավելի համահունչ Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հայության անվտանգային շահերին։
- Ի՞նչ սկզբունքների հիման վրա պետք է ավարտվի պատերազմը (կողմերից մեկի կապիտուլյացիա, վերադարձ մինչեւ 2022 թվականի փետրվարի 24-ի ստատուս քվոյին, տարածքային զիջումներ կողմերից մեկի կողմից, քաղաքական բնույթի փոխզիջումներ եւ այլն)։
- Արդյո՞ք պատերազմը պետք է հանգեցնի Հայաստանի արտաքին քաղաքականության փոփոխության։
- Ուկրաինայի պատերազմին առնչվող այլ հարցեր։

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ

(22 փետրվարի - 10 ապրիլի, 2022թ.)

Ուսումնասիրության թեմային անդրադարձներն ավելի հաճախ են եղել այն լրատվամիջոցներում, որոնցում դիտարկվել են տեքստային նյութերը: Տեսանյութերում, որոնք ռեսուրսներ եւ հատուկ պատրաստվածություն են պահանջում, պատերազմի թեմային անդրադարձները շատ ավելի հազվադեպ էին: Դա կարող է պայմանավորված լինել նրանով, որ ուկրաինական պատերազմի լուսաբանումը հայկական լրատվամիջոցների համար առաջնահերթ թեմա չէր: Այս ենթադրությունը հաստատվում է նաեւ այն փաստով, որ դիտարկված հրապարակումների զգալի մասը վերցված էր արտասահմանյան լրատվամիջոցներից: Բացի այդ, ուսումնասիրված որեւէ նյութերից ոչ մեկը չէր պատրաստվել անմիջապես Ուկրաինայից: Դեպքի վայրից արված հրապարակումները հիմնականում հայտնվել են aliqmedia.am եւ epress.am կայքերում, որոնք այս մշտադիտարկման օբյեկտ չեն եղել:

Այդուհանդերձ, լրագրողական հանրությունը գիտակցում էր պատերազմի լուսաբանման կարեւորությունը: Այդ մասին է վկայում Հեռուստատեսության եւ ռադիոյի հանձնաժողովի դիմումը հեռարձակողներին, (27.02.2022), որով կոչ էր արվում Ուկրաինայի պատերազմի վերաբերյալ հրապարակումներում խուսափել օտարերկրյա լրատվական օրակարգերի սպասարկումից:

Մշտադիտարկման առաջին փուլում ուսումնասիրված 6 ԶԼՄ-ներից թեմային առավել հաճախ անդրադարձել են այն երեքը, որոնցում դիտարկվել են տեքստային նյութերը: «Հրապարակ» թերթի առցանց տարբերակում թեմային անդրադարձ է կատարվել 1,157, «Հայկական ժամանակ»-ում՝ 521, «Առավոտ»-ում՝ 427 հրապարակումներում: Այս ցուցանիշին համադրելի են Հանրային հեռուստատեսության հրապարակումները, որտեղ պատերազմի թեման շոշափվել է 346 նյութերում (ինչպես լրատվական հաղորդումներում, այնպես էլ բանավիճային ձեւաչափերով քննարկումներում եւ հարցազրույցներում): Կարելի է ասել, որ Հանրային հեռարձակողն ուկրաինական իրադարձությունները լուսաբանելիս օգտագործել է ժանրերի ամենամեծ բազմազանությունը: 168.am-ում մշտադիտարկման թեմային անդրադարձ է գրանցվել 72 նյութում, civilnet.am-ում՝ 33, ընդ որում երկուսի դեպքում էլ գրեթե բոլորը հարցազրույցի ժանրում են եղել:

«Հրապարակ»-ի ակտիվությամբ պայմանավորված՝ ԶԼՄ-ների ուսումնասիրված երեք կատեգորիաներից, որոնք ընտրվել էին ըստ դրանց քաղաքական կողմնորոշման, հանրագումարում թեմային առավել հաճախ անդրադարձել են պայմանական ընդդիմադիրները («Հրապարակ» եւ 168.am): Նրանց հաջորդում են պայմանականորեն լոյալները («Հայկական ժամանակ» եւ Հանրային հեռուստատեսություն): Ուկրաինայի պատերազմն առավել նվազ ակտիվությամբ լուսաբանողները պայմանականորեն չեզոքներն էին («Առավոտ» եւ civilnet.am):

Անկախ քաղաքական կողմնորոշումից՝ ուսումնասիրված լրատվամիջոցների մեծ մասը փորձել է հավասարակշռություն պահպանել՝ հավասարապես ներկայացնելով

հակամարտող կողմերի դիրքորոշումները։ Բացառություն են կազմել երկու լրատվամիջոցներ, որոնք ամենաքիչ ակտիվությունն են ցուցաբերել թեմայի լուսաբանման առումով։ 168.am-ում դա, հավանաբար, պայմանավորված է նրանով, որ իր հիմնական «տեղեկատու խումբը» (առավել հաճախ եւ անկախ թեմայից՝ հարցազրույցների հրավիրված քաղաքական գործիչներն ու փորձագետները) պատերազմում աջակցում է ռուսական կողմին։ Civilnet.am-ում հյուրերին Ուկրաինայի մասին զրույցի հրավիրելիս, ամենայն հավանականությամբ, հաշվի են առել ոչ թե նրանց քաղաքական դիրքորոշումը, այլ այն, թե տվյալ հյուրը որքանով է «հետաքրքիր» ու պահանջված լսարանի համար։

Եթե խոսենք առանձին լրատվամիջոցների առանձնահատկությունների մասին, ապա ամենահիշարժանը «Հրապարակ»-ն է։ Ուկրաինական պատերազմի թեմայով այս լրատվամիջոցը դարձել էր հարթակ, որտեղ ներկայացվում էր թե՛ բազմակողմանի տեղեկատվություն եւ թե՛ տարբեր դիրքորոշումներ։ Ընդ որում, հակառակ մոտեցումներով են հանդես եկել ոչ միայն այս լրատվամիջոցի համար «կողմնակի» անձինք, որոնց միջոցով լուսաբանվել է թեման, այլ նաեւ թերթի մշտական հեղինակներն ու աշխատակիցները։ Սա թույլ է տալիս խոսել կա՛մ հստակ խմբագրական քաղաքականության բացակայության, կա՛մ այն մասին, որ դրա էությունը հենց տարբեր, այդ թվում՝ հակադիր կարծիքների, գնահատականների ներկայացումն էր։ Միեւնույն ժամանակ, այս մոտեցումը որոշ իմաստով խնդրահարույց էր, քանի որ թեմային առնչվող այս կամ այն տեսակետը ներկայացվում էր միմյանցից արմատապես տարբերվող բառապաշարով։

Ընդ որում, դա դրսեւորվել էր նաեւ թերթի մշտական հեղինակների, աշխատակիցների մոտ։ Ուկրաինայի կողմից կռվող օտարերկրացիները կարող էին անվանել եւ՛ «կամավորներ» (դրական երանգավորմամբ), եւ՛ «վարձկաններ» (բացասական երանգավորմամբ)։ Մարդասիրական խնդիրը, օրինակ, Բուչայում, տարբեր հեղինակների կողմից կարող էր ներկայացվել թե՛ որպես բեմադրված ներկայացում, թե՛ որպես «ռաշիստների» հանցագործություն։ Ավելին, արմատապես հակառակ մոտեցումները կայքում կարող էին հայտնվել մեկ ժամից էլ պակաս ժամանակային տարբերությամբ։ Այս մոտեցումը մի կողմից «Հրապարակ»-ին թույլ տվեց իր լսարանին մեծ քանակությամբ տեղեկատվություն տրամադրել, մյուս կողմից, սակայն, վտանգ կար, որ սպառողը դուրս չգա հակասական կարծիքների ու գնահատականների լաբիրինթոսից։

Ինչպես ցույց տվեց լրագրողների հետ այս մշտադիտարկման արդյունքների քննարկումը, որոշ լրատվամիջոցներ, որոնց թվում նաեւ չդիտարկված ԶԼՄ-ներ, խմբագրական քաղաքականության նկատմամբ այլ վերաբերմունք ունեն։ Մասնավորապես, hetq.am առցանց պարբերականում, որը նույնպես մշտադիտարկման օբյեկտ չէր դարձել, ուկրաինական պատերազմի առաջին իսկ օրերից մշակվել են բառապաշարի եւ տերմինաբանության օգտագործման, տեղեկատվության ընտրության եւ աղբյուրների հետ աշխատելու ընդհանուր կանոններ՝ թեմայի լուսաբանման առավելագույն հուսալիություն եւ հավասարակշռություն ապահովելու համար։

Հայաստանի հանրային հեռուստատեսությունը պատերազմի լուսաբանման հարցում փորձել է հավասարակշռություն պահպանել, սակայն նրա ընտրած խմբագրական

քաղաքականության որոշ տարրեր հիմք են տալիս խոսելու մշտադիտարկման ժամանակահատվածում այս սկզբունքից շեղման մասին։ Հանրայինի լրագրողները, որպես կանոն, ուկրաինական պատերազմի առնչությամբ օգտագործում էին «հատուկ գործողություն» տերմինը՝ այդպիսով կրկնելով Ռուսաստանի Դաշնության կողմից պաշտոնապես ընտրված հայեցակարգային ապարատը։ Հայաստանի հանրային հեռարձակողի եթերում հարցազրույցներ են տվել մի շարք ռուս պաշտոնյաներ, իսկ Ուկրաինայի պետական կառույցների ներկայացուցիչների դիրքորոշումները փոխանցվել են անուղղակի՝ այլ աղբյուրներից օգտվելով։ Չնայած այն հանգամանքին, որ, օրինակ, Հայաստանում Ուկրաինայի գործերի ժամանակավոր հավատարմատար Դենիս Ավտոնոմովը բաց էր տեղական լրատվամիջոցների հետ համագործակցության համար, եւ շատերը, ի տարբերություն ՀՀԸ-ի, ակտիվորեն օգտագործում էին այդ հնարավորությունը։ Հաշվի առնելով այն փաստը, որ ռուսական երեք հեռուստաալիք հայկական հեռուստաալիքների հետ միասին հեռարձակվում են հանրային մուլտիպլեքսում (այլ երկրների լրատվամիջոցներ այնտեղ չկան), այն լսարանի վրա ազդելու առավելությունը, որը տեղեկատվություն է ստանում հիմնականում վերգետնյա հեռարձակման միջոցով, անկասկած պատկանում էր Ռուսաստանին։

Միեւնույն ժամանակ, ինչպես ցույց տվեց մշտադիտարկումը, լրատվական այլ հարթակներում ռուսական եւ ուկրաինական տեղեկատվական օրակարգերը ներկայացված էին մոտավորապես նույն չափով։ Դրանում որոշակի դեր է խաղացել ոչ միայն Դենիս Ավտոնոմովի գործոնը, այլ նաեւ Հայաստանում Ուկրաինայի նախկին արտակարգ եւ լիազոր դեսպան Ալեքսանդր Բոժկոն եւ Ուկրաինայի ՆԳ նախկին նախարար Արսեն Ավակովը, որոնց գնահատականները տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ ուշադրության եւ վստահության են արժանանում ինչպես ավանդական լրատվամիջոցների, այնպես էլ սոցիալական ցանցերի օգտատերերի կողմից։

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

(ապրիլի 10 - մայիսի 31, 2022թ.)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մշտադիտարկման երկրորդ փուլում Ուկրաինայի պատերազմը լուսաբանվում էր շատ ավելի պակաս ակտիվությամբ, քան առաջինում: Դա, առաջին հերթին, կարող է պայմանավորված լինել նրանով, որ լսարանն «ընտելանում էր» թեմային, եւ երկրորդ՝ հասարակության ուշադրության կենտրոնացումը ներքաղաքական առճակատման վրա (ընդդիմության բողոքի ակցիաների ակտիվացումը):

Ամենաակտիվը, ինչպես եւ առաջին փուլում, «Հրապարակ» թերթի առցանց տարբերակն էր՝ թեմային անդրադարձող 313 հրապարաումներով: Լուսաբանման ինտենսիվությամբ երկրորդը Հայաստանի հանրային հեռուստատեսությունն էր (246): Մոտավորապես նույն ակտիվությունն են ցուցաբերել «Առավոտը» (108) եւ «Հայկական ժամանակը» (103): Թեմայի նկատմամբ ամենաքիչ հետաքրքրությունը, ինչպես եւ առաջին փուլում, տեղերի փոխանակմամբ դրսեւորել են civilnet.am (16) եւ 168.am (11) կայքերը: Ճիշտ է, այստեղ պետք է նկատի ունենալ, որ մշտադիտարկման առարկա են դարձել այս երկու լրատվամիջոցների միայն տեսանյութերը, գործնականում՝ միայն հարցազրույցները, որոնք ապրիլ-մայիս ամիսներին հիմնականում նվիրված են եղել ներքաղաքական առճակատմանը եւ հայ-ադրբեջանական հարաբերությունների լարվածությանը: Ի տարբերություն առաջին փուլի՝ պայմանականորեն լոյալ լրատվամիջոցներն ուկրաինական պատերազմի թեմայի լուսաբանման ինտենսիվությամբ գերազանցել են պայմանական ընդդիմադիրներին:

Մշտադիտարկումն արտացոլել է հայ հասարակության տարբեր խմբերի աշխարհաքաղաքական հայացքների արմատական տարբերությունները: Ուսումնասիրված լրատվամիջոցների հրապարակումները պարունակում էին ինչպես իրադարձությունների ռուսական մեկնաբանությունը («Պուտինն այլ ելք չուներ»), այնպես էլ հակառակը. «Ոչինչ չէր կարող սպառնալ Ռուսաստանին, հենց նա է «պայթեցնում» գոյություն ունեցող աշխարհակարգը»: Հրապարակումների այս երկու ծայրահեղ տարբեր դիրքորոշումների միջեւ շատ երանգներ կային: Թեմայի այնպիսի ասպեկտի վերաբերյալ, ինչպիսին է պատերազմի ազդեցությունը Հայաստանի անվտանգության եւ Արցախի ապագայի վրա, քանակական առումով գերակշռում էին Ռուսաստանի հանդեպ հույս տածելու մոտեցումները: Ինչ վերաբերում է պատերազմի պատճառներին, ապա հավասարապես առկա էին թե՛ Արեւմուտքի, թե՛ Մոսկվայի դատապարտումը: Ընդ որում, շատ դեպքերում, անկախ աշխարհաքաղաքական նախապատվություններից, Ուկրաինան եւ նրա քաղաքացիներն ընկալվում էին որպես կարեկցանքի արժանի զոհեր:

Ուկրաինական պատերազմի լուսաբանման հիմնական առանձնահատկություններից էր ուսումնասիրված բոլոր լրատվամիջոցների կողմից խնդիրների դիտարկումը հայկական շահերի տեսանկյունից: Մասնավորապես, 2022 թվականի փետրվարի 22-ին ԴԺՀ-ի եւ ԼԺՀ-ի ճանաչման հարցը լուսաբանվել է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշման հեռանկարի համատեքստում: Ընդ որում, հարցը դիտարկվել է թե՛ որպես դրական նախադեպ, թե՛ որպես ինքնորոշման սկզբունքի վարկաբեկում, որը հակասում է արցախահայության շահերին: Պատերազմի ելքը, ինչպես վերը նշվեց, նույնպես գնահատվել է Հայաստանի եւ Արցախի անվտանգության խնդրի լուծման համատեքստում: Թեեւ ավելի հաճախ էր հանդիպում կարծիքը, որ Ռուսաստանի պարտությունը հղի է լուրջ սպառնալիքներով արցախահայերի համար, սակայն արտահայտվում էր նաեւ տեսակետ, որ Ուկրաինայում Ռուսաստանի հաղթանակը կնշանակի Հարավային Կովկասում ռուս-թուրքական տանդեմի գերակայություն եւ հայկական ազգային շահերի անտեսում:

Բազմաթիվ հրապարակումներում «կարմիր թելի» պես անցնում էր Լեռնային Ղարաբաղի 44-օրյա պատերազմի եւ Ուկրաինայի պատերազմի հանդեպ միջազգային հանրության վերաբերմունքի, հաճախակի շրջանառվող «երկակի ստանդարտների» թեման. միջազգային հանրությունը համերաշխություն դրսեւորեց Ուկրաինայի նկատմամբ, բայց անտարբեր էր, երբ Արցախն ու Հայաստանը ենթարկվում էին ագրեսիայի: Միեւնույն ժամանակ, որոշ հրապարակումներում մատնանշվում էին հայ հասարակության մեջ դրսեւորվող նման «նեղացվածության» անհիմն լինելը եւ երկու պատերազմների միջեւ եղած սկզբունքային տարբերությունները:

Մեծ ուշադրություն էր դարձվել Ռուսաստանի դեմ պատժամիջոցների խնդրին: Այստեղ գերակշռում էին ոչ թե դրանց արդարության վերաբերյալ գնահատականները, այլ կոնկրետ արդյունքներն ու ազդեցությունը Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Հաշվի էին առնվել ինչպես ռիսկերը (գների աճ, որոշակի ապրանքների հնարավոր դեֆիցիտ, հաղորդակցության հետ կապված խնդիրներ, ֆինանսական եւ բանկային համակարգի գործունեություն եւ այլն), այնպես էլ հնարավորությունները (քաղաքացիների եւ ձեռնարկությունների տեղափոխում, հիմնականում Ռուսաստանից, բայց նաեւ Ուկրաինայից եւ Բելառուսից, Հայաստանի՝ նոր շուկաներ դուրս գալու կամ հին շուկաներում դիրքերի բարելավման հեռանկարները): Միեւնույն ժամանակ, «եկվորների» մեծ հոսքի, հայ հասարակությանը եւ երկրի կյանքի բոլոր ոլորտներում Հայաստան տեղափոխվածների ինտեգրվելու նկատմամբ գրեթե անվերապահ դրական վերաբերմունք է եղել:

Առանձին լայնորեն լուսաբանված թեմա էր Ուկրաինայում հայերի վիճակը եւ նրանց խնդիրների լուծումը, այդ թվում՝ էվակուացիայի տեխնիկական հարցերը եւ մասնակցությունը ռազմական գործողություններին: Հայկական լրատվամիջոցների տեղեկատվության հիմնական աղբյուրներից մեկը Ուկրաինայում հայ համայնքի փոխնախագահ Դավիթ Մկրտչյանն էր:

Ինչպես միջազգային շատ հարցեր, այնպես էլ Ուկրաինայում ընթացող պատերազմը լուսաբանվել է Թուրքիայի եւ Ադրբեջանի վարքագծի եւ քաղաքական առաջնահերթությունների համատեքստում: Առկա է եղել սկզբունք՝ «այն, ինչ ձեռնտու է այս երկրներին, Հայաստանի համար գոյաբանական վտանգ է:

Հասարակական կարծիքի առաջնորդների երեք կատեգորիաներից, որոնց դիրքորոշումներն ուսումնասիրվել են Ֆեյսբուքում, թեմային առավել հաճախ անդրադարձել են իշխանությունների նկատմամբ պայմանականորեն լոյալ անձինք, որոնց հաջորդում են պայմանականորեն չեզոքները, իսկ պայմանական ընդդիմադիրներն ամենանվազ ակտիվն են եղել: Հենց այս դասավորվածության արդյունքում է, որ Ուկրաինայի նկատմամբ համակրանքն ավելի մեծ տեղ է գրավել, քան աջակցությունը Ռուսաստանի Դաշնության ներխուժմանը: Ի տարբերություն ավանդական լրատվամիջոցների, որտեղ ներքաղաքական հարցերում կողմնորոշումը մեծ մասամբ չի ազդել պատերազմի կողմերի նկատմամբ դիրքավորման վրա, ՀՀ իշխանությունների հանդեպ լոյալ օգտատերերը եւ հատկապես չեզոք կարծիքի առաջնորդները սոցիալական ցանցերում արտահայտած իրենց դիրքորոշումներում, որպես կանոն, աջակցում էին Ուկրաինային: Մինչդեռ խորհրդարանական ընդդիմության կողմնակիցներն արդարացնում էին Ռուսաստանի գործողությունները: Սոցցանցերի հայկական հատվածում հասարակական կարծիքի առաջնորդների դրսեւորած վարքագիծը մեկ այլ առանձնահատկությունն էլ ուկրաինական պատերազմի վերաբերյալ հավանումների եւ հակակրանքների անձնավորումն էր: Նրանց գրառումներում այս կամ այն կողմի նկատմամբ վերաբերմունքը բավականին հաճախ արտահայտվում էր պատերազմող երկրների ղեկավարների՝ Վոլոդիմիր Զելենսկու եւ Վլադիմիր Պուտինի մասին գնահատականներով ու կարծիքներով, այլ ոչ թե պետությունների՝ որպես այդպիսին:

Մշտադիտարկման արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս ուկրաինական պատերազմի լուսաբանման հարցում հայկական լրատվամիջոցների հետագա աշխատանքի համար ձեւակերպել հետեւյալ հիմնական եզրակացություններն ու առաջարկությունները:

Նախ՝ նպատակահարմար է մանրազնին կերպով մշակել խմբագրական քաղաքականություն, որն անկողմնակալություն եւ հուսալիություն կապահովի պատերազմի լուսաբանման հարցում: Մասնավորապես, այն պետք է վերաբերի տերմինների եւ հասկացությունների օգտագործմանը, տեղեկատվության աղբյուրների ընտրությանը, փորձագիտական մեկնաբանությունների հանդեպ պատասխանատու վերաբերմունքին՝ կանխակալ գնահատականներից խուսափելու համար: Նման քաղաքականության բացակայությունը խոչընդոտ է դառնում լսարանի զգալի մասի կողմից պատերազմի մասին տեղեկատվական հոսքերի համարժեք ընկալման համար: Երկրորդ՝ ԶԼՄ-ները պետք է ջանքեր գործադրեն իրադարձություններն անմիջապես տեղից լուսաբանելու համար: Եթե անհնար է ուղարկել սեփական թղթակիցներին, ապա այս հարցը կարող է լուծվել՝ տեղի ունեցող իրադարձությունների անմիջական վկաներ հանդիսացող տեղեկատուներ գտնելով:

Երրորդ՝ ժամանակակից միջազգային հարաբերություններում եւ հակամարտություններում միջազգային իրավունքի սկզբունքների կիրառման ճգնաժամը դրանց նկատմամբ նիհիլիստական մոտեցման հիմք չպետք է հանդիսանա հայկական ԶԼՄ-ների համար: Կոնկրետ իրադարձությունների եւ պատերազմի համապատկերի իրատեսական լուսաբանումը չի բացառում ներգրավված կողմերի դերի վերաբերյալ արժեքային կողմնորոշումների առկայությունը:

Չորրորդ՝ հայկական լրատվամիջոցները պետք է հնարավորինս հրաժարվեն կեղծ պատմություններից, որոնք հակամարտող կողմերին, առաջին հերթին Ուկրաինային, զրկում են սուբյեկտայնությունից, որի առնչությամբ ամենից հաճախ են նման նարատիվներ տարածվում: Որքան էլ որ աշխարհաքաղաքական բեւեռների առճակատումը դրսեւորվի պատերազմում, անմիջականորեն ներգրավված յուրաքանչյուր կողմ լուծում է իր ազգային խնդիրները եւ պաշտպանում իր շահերը: Լսարանին այս նպատակների եւ հետաքրքրությունների ներկայացումը պետք է հիմնված լինի իրական փաստերի, այլ ոչ թե մտացածին դավադրությունների գլոբալ եւ տարածաշրջանային տեսությունների վրա:

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

www.ypc.am